Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

N 374
355.4
4-21
C 1926 N 518
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
355.4
4-21

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Հ. Ս. Խ. Հ.

## ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԻՄԻԱ-ԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(ԴՈՔՐՈԽԻՄ)

1924
…ՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

Ս
ձ1345
1 MAR 2010

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Հ. Ս. Խ. Հ. Քիմիական Պաշտպանության և Քիմիական Արդյունաբերության Բարեկամների Ընկերությունը (Դոբրոխիմ) հիմնվում է նպատակ ունենալով.

ա) զարգացնել ազգաբնակության քիմիական գրագիտությունը և հասարակական լայն շրջաններում տարածել գազերից պաշտպանվելու անհրաժեշտության գաղափարը.

բ) ամեն կերպ նպաստել ժողովրդ. տնտեսության և յերկրի պաշտպանության գործում քիմիայի կիրառման խնդիրների լաբորատոր յեղանակով մշակման.

գ) աջակցել ժողովրդ. տնտեսության և ռազմական գործի պահանջների համեմատ քիմիական արդյունաբերության զարգացման, և

դ) գտնել միջոցներ յերկրի քիմիական պաշտպանության գործը կազմակերպելու համար:

§ 2. Սրա համեմատ Հ. Ս. Խ. Հ. Դոբրոխիմը իրավասու է.

ա) հիմնել Հ. Ս. Խ. Հ. ամբողջ տերրիտորիայի վրա բաժանմունքներ և ֆիլիալներ.

26 FEB 2014



բ) § 1. մատնաշված նպատակներն իրականացնելու համար հայթայթել միջոցներ՝ կազմակերպելով դասախոսություններ, յերեկույթներ, համերգներ և այլն.

գ) ամենուրեք կազմակերպել գիտական ոժանդակ հիմնարկներ, ինչպես և հանձնաժողովներ քիմիայի կիրառման առանձին խնդիրները բազմակողմանի ուսումնասիրելու և մշակելու համար.

դ) կազմակերպել հրատարակչություններ, գրադարաններ, դասընթացներ, դպրոցներ, ցուցահանդեսներ, համագումարներ, նվիրված քիմիական ինքնապաշտպանության և քիմիական արդյունաբերության.

ե) ձեռք բերել և օտարել ամեն տեսակ գույքեր, կնքել ստացվածային պայմանագրեր և գործարքներ, տալ ամեն տեսակ պարտավորություններ, հայցել և պատասխանել դատարաններում և կատարել որենքով չարգելված, Դոբրոխիմի գործունեյության հետ կապված ու նրանից բղխող իրավական արարքներ։

§ 3. Հ. Ս. Խ. Հ. Դոբրոխիմն օժտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով, ունի յուր կնիքը և **Ս. Խ. Հ. Մ.** Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի նախագահության կողմից սահմանված անդամության նշան։

§ 4. Դոբրոխիմի գործունեյությունը տարածվում է ՀՍԽ ամբողջ հանրապետության վրա և

Պետական Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР

S6846·66



նա յուր տեղական կազմակերպությունների միջոցով ստանում է բացառիկ իրավունք ընկերության առաջադրած խնդիրների իրականացման և զարգացման համար միջոցներ հանգանակելու։ ՀՍԽՀ Դոբրոխիմը հանձին Կենտրոնական Խորհրդի՝ գտնվում է Յերևանում։

## II. Հ. Ս. Խ. Հ. ԴՈԲՐՈԽԻՄԻ ԿԱԶՄԸ

§ 5. **Հ. Ս. Խ. Հ. Դոբրոխիմն ունի իսկական յեվ նախանձախնդիր անդամներ***).

§ 6. Դոբրոխիմի անդամ կարող են լինել ինչպես չափահաս առանձին քաղաքացիներ, այնպես էլ ամբողջ կազմակերպություններ, այն է՝ կառավարչական հիմնարկներ, տնտեսական մարմիններ, արհմիություններ, ուսանողական կազմակերպություններ, ֆաբրիկներ, գործարաններ, առանձին գյուղեր և այլն (իրավական անձինք)։

**Ծանոթություն.** Դոբրոխիմի իբր իսկական անդամ կարող են ընդունվել 14 տարեկան հասակըն առած անչափահաս կոմսոմոլներ և աշխատանքի II-րդ աստիճանի դպրոցի աշակերտներ։

§ 7. Նախանձախնդիր անդամ կարող են լինել 10 տարեկանից վոչ պակաս հասակ ունեցող անչափահաս քաղաքացիները։

*) Դոբրոխիմի անդամ կարող են լինել այն քաղաքացիները միայն, վորոնց իրավունքները դատավճռով սահմանափակված չեն։

§ 8. Դոբրոխիմին անդամագրվել ցանկացող անձինք ու կազմակերպությունները համապատասխան հայտարարությամբ դիմում են Դոբրոխիմի տեղական կազմակերպությունների նախագահության կամ նրանց բջիջին և վերջիններիս կողմից հաստատվում են։

§ 9. Կոլեկտիվ կերպով Դոբրոխիմի անդամ չեղող կազմակերպությունները՝ կոլեկտիվի յուրաքանչյուր 10 անդամի համար մի ձայնի իրավունք ունեն, սակայն ընդամենը ոչ ավելի քան 10 ձայն։

**Ծանոթություն.**—Հիշյալ կազմակերպությունները Դոբրոխիմի անդամի իրավունքներով օգտվում են ամբողջականորեն և ոչ թե տվյալ կոլեկտիվի մեջ գտնվող առանձին անդամները, **վորչափ վոր նրանք անձնապես Դոբրոխիմի անդամ չեն.**

## III ԴՈԲՐՈԽԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 10. Դոբրոխիմի յուրաքանչյուր իսկական անդամ իրավունք ունի.

ա) Վճռական ձայնի իրավունք՝ Դոբրոխիմի իր կազմակերպության նիստերում և ընտրվելու իրավունք ընկերության վարչական պաշտոնների համար.

բ) մի անգամ գազերով «ծուխ տալու» այդ նպատակին ծառայող հատուկ կամերայում («գազային մկրտություն»)։



**Ծանոթություն.** «բ» կետում նախատեսված իրավունքներն իրականացնելու կարգը սահմանում են ընկերության ղեկավար մարմինները։

գ) Արտոնյալ պայմաններով օգտվել գրադարաններից, թանգարաններից, Դոբրոխիմի կազմակերպած ցուցահանդեսներից ու դասախոսություններից։

դ) Նախապատվության իրավունք Դոբրոխիմի կազմակերպած դասընթացքներն ու դպրոցները մտնելու։

ե) Իրավունք կրծքին կրելու Դոբրոխիմի նշանը։

զ) Իրավունք հատուկ մանդատով Դոբրոխիմի անունից հրապարակ դուրս գալու։

է) Արտոնյալ պայմաններով ձեռք բերել Դոբրոխիմի արտադրությունները և հակագազերը։

**Ծանոթություն.** Նախանձախնդիր անդամներն օգտվում են «զ» և «ե» կետերի արտոնություններով. ինչպես և Դոբրոխիմի կազմակերպությունների ընդհանուր ժողովներում խորհրդակցական ձայնի իրավունքով։

§ 11. Դոբրոխիմի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ամեն կերպ նպաստել պաշտպանության գործին, քարոզի ու համապատասխան կազմակերպչական միջոցներով Դոբրոխիմի առաջադրած խնդիրներն ու նպատակները պարզաբանել, վորի համար մասնավորապես պարտական է.

ա) ժամանակին մուծել անդամավճարը.

բ) Կանոնավոր հաճախել Դոբրոխիմի յուր կազմակերպության (բջիջի), ինչպես և Դոբրոխիմի թե կենտրոնական և թե տեղական կազմակերպությունների ընդհանուր ժողովներին.

գ) Ագիտացիա անել և քարոզել Դոբրոխիմին անդամագրվելու և Դոբրոխիմի օգտին նվիրատվություններ անելու.

դ) Աջակցություն ցույց տալ Դոբրոխիմի հրատարակությունները տարածելու, աջակցել նվիրատվություններ հանգանակելուն, դասախոսություններ, ներկայացումներ և այլն կազմակերպելուն.

ե) Հետևել, որ Դոբրոխիմի անունով որևէ անպատվաբեր գործողություն չկատարվի։

§ 12. Դոբրոխիմի անդամները պարտավոր են կատարել կանոնադրության պահանջները և ընկերության վարչական մարմինների հրահանգներն ու կարգադրությունները։

§ 13. Դոբրոխիմի անդամները պարտավոր են անդամավճար մուծել տարեկան մի ռուբլի։

**Ծանոթություն 1.** Կարմիր բանակայիններն անհատապես անդամագրվելու դեպքում վճարում են 10 կոպ. տարեկան.

**Ծանոթություն 2.** Անդամավճարները վոչ մի դեպքում հետ չեն վերադարձվում։

§ 14. Դոբրոխիմի անդամներն ընկերությունից հեռացած են համարվում.



ա) Նրանց կամովին հեռանալու կամ հեռացվելու դեպքում.

բ) 3 ամսից ավելի ժամանակամիջոցում անդամավճար չմուծելու դեպքում.

գ) Դատարանով իրավունքներից սահմանափակվելու դեպքում.

դ) Քրեական պատժելի արարքի կամ ընկերության վարկաբեկող արարքների դեպքերում։

§ 15. Ընկերության անդամությունից հեռացնելու ձեռնհասությունը վերապահվում է նախնական բջիջների Բյուրոյին և Դոբրոխիմի տեղական կազմակերպությունների նախագահության. ընդ սմին հեռացված անդամներին իրավունք է վերապահվում գանգատվել հեռացման վորոշման դեմ համապատասխան բարձր ատյաններում։

## IV. Հ. Ս. Խ. Հ. ԴՈԲՐՈԽԻՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

§ 16. Դոբրոխիմի վարչական ու վերաստուգիչ մարմիններն են.

ա) Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարը.

բ) Դոբրոխիմի Կենտրոնական Խորհուրդը.

գ) Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի Նախագահությունը.

դ) Վերաստուգիչ Հանձնաժողովը.

## Հ. Ս. Խ. Հ. ԴՈԲՐՈԽԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

*§ 17. Դոբրոխիմի կազմակերպ. պատգամավորների Համահայաստանյան Համագումարը հրավիրվում է Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի Նախագահության կողմից տարեկան առնվազն մի անգամ: Համագումարի ժամանակը, տեղը և ռեգլամենտը վորոշում է Կենտրոնական Խորհրդի Նախագահությունը: Համագումարի օրակարգը հրապարակվում է վոչ ուշ մի ամիս առաջ: Նույն ժամկետին հրապարակված պետք է լինեն Դոբրոխիմի Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումները: Կազմակերպությունների ներկայացուցչության նորմերն ու կարգը վորոշում է Դոբրոխիմի խորհուրդը և հաստատում է Համագումարը:*

*§ 18. Դոբրոխիմի Համահայաստանյան Համագումարի զբաղման առարկաներն են.*

*ա) Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի ընտրություն.*

*բ) Դոբրոխիմի Վերստուգիչ Հանձնաժողովի ընտրություն:*

*գ) Դոբրոխիմի կազմակերպությունների հեռացումը կամ փակումը նրանց գործունեության Դոբրոխիմի շահերին հակառակ ընթացքի համար.*



*դ) Դոբրոխիմի կանոնադրության փոփոխում և լրացում.*

*ե) Քննումն և հաստատում Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումների ու հաշվետվությունների, ինչպես և Դոբրոխիմի առաջիկա աշխատանքների նախագծումը մինչև հաջորդ համագումարը.*

*զ) Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդին օրվելիք հրահանգի (նակազ) մշակում:*

*է) Քննություն այն բոլոր խնդիրների, վոր Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի ձեռնհասությունից վեր են.*

## Ը. Հ. Ս. Խ. Հ. ԴՈԲՐՈԽԻՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

*§ 19. Դոբրոխիմի Կենտրոնական Խորհուրդը կազմվում է 21 անդամներից, վոր ընտրվում են Դոբրոխիմի կազմակերպությունների Համահայաստանյան Համագումարում, վորտեղ ընտրվում են նաև 7 թեկնածու:*

**Ծանոթություն 1.** *Մինչև Դոբրոխիմի կազմակերպությունների Համահայաստանյան Համագումարը գործում է ժամանակավոր խորհուրդը, վոր ընտրվում է Դոբրոխիմի Յերևանի անդամների ընդհանուր ժողովում:*

**Ծանոթություն 2.** *Բոլոր ժողկոմատները*

և կենտրոնական հաստատությունները ու կազմակերպությունները իրավունք ունեն խորհրդակցական ձայնով իրենց ներկայացուցիչները ուղարկել Դոբրոխիմի կենտրոնական խորհրդի նիստերին։

§ 20. Դոբրոխիմի կենտրոնական խորհրդի վորոշումները օրինավոր են համարվում խորհրդի անդամների վոչ պակաս կեսը ներկա գտնվելու դեպքում. վորոշումներ կայացվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

21. Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարից մինչև հաջորդ համագումարը՝ Կենտրոնական Խորհուրդը հանդիսանում է Դոբրոխիմի գերագույն մարմինը.

Նրա վարչության մեջ մտնում են.

ա. Տալ ընդհանուր ղեկավարող ցուցմունքներ և հատուկ լիազորություններ Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի նախագահության.

բ. Նախագահության հաշվետվությունների և զեկուցումների քննություն.

գ. Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարի վորոշումների և հրահանգների կենսագործումը.

դ. Խորհրդի Նախագահության մշակած աշխատանքների ընդհանուր օրինակելի նախագծի (պլանի) հաստատումը.



ե. Դոբրոխիմի կանոնադրության համապատասխան փոփոխությունների նախագծում.

§ 22 Դոբրոխիմի Կենտրոնական Խորհուրդը յուր գործունեյության մասին Դոբրոխիմի կազմակերպություններին տեղյակ է դարձնում գրավոր կերպով առնվազն տարեկան 2 անգամ։

§ 23. Կենտրոնական Խորհուրդը գումարվում է նախագահության նախաձեռնությամբ առնվազը 4 ամիսը մի անգամ։ Արտակարգ դեպքերում Խորհուրդը գումարվում է խորհրդի անդամներից առնվազը 5 հոգու գրավոր հայտարարությամբ և Վերստուգիչ Հանձնաժողովի պահանջով։

§ 24. Կենտրոնական Խորհրդի անդամները իրավունք ունեն վճռական ձայնի իրավունքով մասնակցել Դոբրոխիմի բոլոր տեղական կազմակերպությունների խորհրդներին և նախագահություններին։

## Գ. ՀՍԽՀ ԴՈԲՐՈԽԻՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

§ 25. Դոբրոխիմի կենտրոնական խորհուրդը յուր միջից ընտրում է նախագահություն՝ թվով 5 հոգի և 3 թեկնածու.

§ 26. Կենտրոնական խորհրդի նախագահությունը յուր միջից ընտրում է խորհրդի նախագահ, 1 փոխանորդ, քարտուղար, գանձապահ, և նախա-

գործունեության անդամների մեջ բաշխում է հատուկ սեկցիաներ վարելու պարտականությունները, վորտեղ նրանք հանդիսանում են նախագահներ։

§ 27. Կենտրոնական խորհրդի նախագահը, նրա փոխանորդը և խորհրդի քարտուղարը և գանձապահը հանդիսանում են միաժամանակ Հ. Ս. Խ. Հ. Դոբրոխիմի համապատասխան նախագահը, քարտուղարը և գանձապահը։

§ 28. Կենտրոնական խորհրդի նախագահի, նրա տեղակալի և խորհրդի քարտուղարի պարտականությունն է խորհրդի ներկայացչությունը կառավարչական, հասարակական և մասնավոր հիմնարկների, ինչպես և պաշտոնական ու մասնավոր անձանց հետ ամեն տեսակ գործ ունենալիս։

§ 29. Նախագահության նիստերն օրինական են համարվում յերբ ներկա յե մեծամասնությունը։

§ 30. Դոբրոխիմի Կենտրոնական խորհրդի նախագահության իրավունքներն ու պարտականությունները։

ա. Դոբրոխիմի բոլոր գործերի ու գույքի կառավարումը.

բ. Ընդունել անդամավճարներ, նվիրաբերումներ և առհասարակ դրամական գումարներ, ակտավոր թղթեր և այլ արժեքներ, վոր մտնում են դրամարկղը Դոբրոխիմի ընթացիկ հաշվով, ընդունել դրամական գումարներ փոստային և վարկային հիմնարկներից ընթացիկ հաշվի ու ավանդների հաշվին։



գ. Դոբրոխիմի միջոցներից ծախսեր կատարել Կենտրոնական Խորհրդի ցուցմունքների համեմատ, իսկ արտակարգ դեպքերում յուր հայեցողությամբ՝ հետագայում խորհրդին զեկուցելով.

դ. Համահայաստանյան Համագումարի հրահանգների և Կենտրոնական Խորհրդի ցուցմունքների համաձայն մշակել աշխատանքների ընդհանուր որիյենտիր նախագիծ.

ե. Կազմել նախահաշիվ, հաշվետվություն և հաշվեկշիռ.

զ. Դոբրոխիմի անունից ներկայացուցչություն բոլոր դատարանական և վարչական հիմնարկներում.

ը. Դոբրոխիմի անունից հավատարմագրեր և վկայականներ տալ.

թ. Գնել և վաճառել ամեն տեսակ նյութեր և գույք կանխիկ և ապառիկ, ինչպես և Դոբրոխիմի անունից կնքել ամեն տեսակ պայմանագրեր և գործարքներ, վարձել գույք և բնակարան, ապահովագրել գույքեր և այլն.

ժ. Կենտրոնական Խորհրդի քննության յենթակա բոլոր հարցերի մշակումը և ընդհանրապես վերջիններս բոլոր վորոշումների և ցուցմունքների ի կատար ածելը.

§ 31. Նախագահության առընթեր գործում են քարտուղարությունը և սեկցիաներ՝

ա. Կազմակերպչական ագիտացիոն և ֆինանսական.

բ. Քիմիայի կիրառման գյուղական և անտառային տնտեսություններում.

գ. Գիտական—տեխնիքակ. և արտադրական.

ե. Սեկցիաները գործում են Դոբրոխիմի նախագահության հաստատած հատուկ լիազորությունների հիման վրա։ Սեկցիաների անդամներին սեկցիաների նախագահների առաջարկությամբ հաստատում է Դոբրոխիմի նախագահությունը։

§ 32. Արտակարգ դեպքերում Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի ձեռնհասության վերապահված խնդիրները շտապ կարգով լուծելու անհրաժեշտության հետևանքով, երբ գործի էությամբ պահանջված ժամկետին անհնար է գումարել խորհուրդի նիստ, նախագահությունն իրավունք ունի «բ» բաժնում հիշված խնդիրները լուծել ինքնորեն կերպով, հետագա նիստում Կենտրոնական Խորհրդին կայացված վորոշումների մասին ի գիտություն հայտնելով։

## V. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

§ 33. Դոբրոխիմի վերստուգիչ հանձնաժողովն ունի նախագահ, երկու անդամ և մեկ թեկնածու, վոր ընտրվում են մի տարի ժամանակով, Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարում այն անդամներից, վոր չեն մտած Կենտրոնական Խորհրդի կազմի մեջ։

ИНСТИТУТА ВОСТОКОВЕД... Академии ... СССР



§ 34. Վերստուգիչ Հանձնաժողովը, վորպես ստուգիչ մարմին՝ գործում է անկախ՝ հավաքվելով յուր հայեցողությամբ վորոշված ժամանակներում, սակայն առնվազն մի անգամ 6 ամսում. և ստուգման է յենթարկում Դոբրոխիմի բոլոր հիմնարկներն ու գրամարկղը։

Կատարված ստուգումների արձանագրությունները ներկայացվում են Կենտրոնական Խորհրդին և Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից զեկուցվում են Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարին։

§ 35. Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա լինել Կենտրոնական Խորհրդի և նրա նախագահության նիստերին։

## VI. ԴՈԲՐՈԽԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԵՂԵՐՈՒՄ

§ 36. Դոբրոխիմի կազմակերպությունները հիմնվում են ամենուրեք, ՀՍԽՀ սահմաններում, առնվազն 7 հոգուց բաղկացած նախաձեռնող խմբակի միջնորդությամբ և հաստատվում են տեղական կազմակերպությունների համապատասխան աստիճանի նախագահությունների կողմից։

Ծանոթություն. — Տեղերում դեռ ևս Դոբրոխիմի կազմակերպություն չլինելու դեպքում նախաձեռնող խմբակը դիմում է հաստատման

Գոս Библиотека ZUUՌ-Арм.ССР им. А. Мясникяна

համար Դոբրոխիմի Կենտր. Խորհրդի նախագահության։

§ 37. Դոբրոխիմի կազմակերպություններն ունեն ստորաբաժանումներ. հանրապետական, գավառային, քաղաքային (միայն մեծ քաղաքներում՝ Յերևան, Լենինական) գավառակային և Դոբրոխիմի նախնական բջիջներ առընթեր ֆաբրիկաներին, գործարաններին, հիմնարկներին, դպրոց. հաստատություններին, ձեռնարկություններին, զորական մասերին, արհեստակց. կազմակերպություններին և այլն։

Դոբրոխիմի տեղական կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Դոբրոխիմի ընդհանուր խնդիրներով և սույն կանոնադրության բոլոր կանոններով, հետևելով Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի և նրա Նախագահության ցուցմունքներին, նախադեպերին, հրահանգներին ու առանձին կարգադրություններին, իրենց գործունեության մասին պարբերաբար զեկուցումներ ներկայացնելով յենթակայության կարգով Դոբրոխիմի վերադաս մարմնին։ Դոբրոխիմի տեղական կազմակերպությունները հիմք ընդունելով Համահայաստանյան Համագումարի հաստատած տիպական ծրագիրը՝ կազմում են իրենց գործունեության ծրագիրը, որ հաստատվում է Դոբրոխիմի տեղական կազմակերպությունների համագումարի կողմից:

Տեղական կազմակերպությունների փունկցիաներն



իրավունքներն ու պարտականություններն ամեն անգամ սահմանվում են Դոբրոխիմի վերադաս մարմնի նախագահության կողմից՝ յելնելով համապատասխան կազմակերպության գործունեության բնույթից ու մասշտաբից։

§ 38. Դոբրոխիմի համապատասխան կազմակերպությունների մարմիններն են.

ա. Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների համագումարներ՝ հանրապետական, քաղաքային, գավառային, գավառակային և ընդհանուր ժողովներ բջիջների անդամների.

բ. Տեղական կազմակերպությունների խորհուրդներ, թվով 5—10 հոգի, որ ընտրվում են Դոբրոխիմի տեղական կազմակերպությունների պատգամավորների համագումարում.

գ. Տեղական խորհուրդների նախագահություն՝ թվով 3—5 հոգի, որ ընտրվում են խորհուրդների կողմից.

դ. Բջիջների բյուրո՝ թվով 3—5 հոգի, որ ընտրվում են բջիջների ընդհանուր ժողովում.

ե. Վերստուգիչ հանձնաժողովներ՝ 3 հոգուց, որ ընտրվում են տեղական համագումարների կողմից, սակայն Դոբրոխիմի տվյալ կազմակերպությունների խորհուրդների կազմից դուրս յեղող անդամներից։

Վերստուգիչ հանձնաժողովներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են սույն կա-

նոնադրության §§ 33—35 հիշված կանոններով։

§ 39. Տեղական կազմակերպությունների գործունեության Դոբրոխիմի խնդիրներից շեղելու կամ Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի ցուցմունքներն ու կարգադրությունները կատարել խուսափելու դեպքում՝ Կենտրոնական Խորհուրդը կարող է կարգադրել լուծել տվյալ կազմակերպությունը։

§ 40. Դոբրոխիմի նպատակներին հետևող և վոչ մի կազմակերպություն չի թույլատրվի սկսել գործել և օգտվել «Քիմիական պաշտպանության և քիմիական արդյունաբերության բարեկամների ընկերություն» անունից, յեթե նա սույն կանոնադրության պահանջներին չի բավարարում։

## VII. ԴՈԲՐՈԽԻՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 41. Դոբրոխիմի միջոցները կազմում են

ա. Անդամավճարները.

բ. Ընդհանուր նվիրատվություններ, հանգանակություններ, Դոբրոխիմի տեղական կազմակերպությունների հատկացումները և այլ մուտքեր.

գ. Նվիրատվություններ հատուկ նպատակների համար։

դ) Դասախոսություններից (ցուցահանդես), երեկույթներից, ցուցադրումներից և այլն գոյացած յեկամուտները.

ե) Դոբրոխիմի գույքերի շահագործումից և այլ



ձեռնարկություններից ստացված յեկամուտները.

զ) Դոբրոխիմի արտադրությունների վաճառքից ստացված գումարները։

§. 42. Դոբրոխիմի միջոցները ծախսվում են Կենտրոնական Խորհրդի նախագահության կողմից Կենտրոնական Խորհրդի հաստատած նախահաշվով։

§. 43. Դոբրոխիմի կազմակերպությունները նյութական միջոցներ գտնելու գործում անդամավճար սահմանելուց զատ, հանդես են բերում ինքնուրույնության և նախաձեռնության մաքսիմումը, ղեկավարվելով Դոբրոխիմի Կենտրոնական Խորհրդի դիրեկտիվներով։

§. 44. Դոբրոխիմի կազմակերպությունների այս կամ այն ճանապարհով գոյացած բոլոր գումարները դրվում են Կենտրոնական Խորհրդի տրամադրության տակ, բացառությամբ այն մասի, վոր Դոբրոխիմի համապատասխան վերադաս կազմակերպությունների նախագահության կողմից հաստատված նախահաշվով թողնվում է տեղական կարիքների համար, վորը սակայն չպետք է գերազանցի տվյալ կազմակերպության ամբողջ մուտքի 25%-ին։

§. 45. Հաշվետու տարին սահմանվում է յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը, առաջին հաշվետու տարին համարվում է կամպանիայի սկզբից մինչև 1924 թ. սեպտ 30-ը։

## VIII. Հ. Ս. Խ. Հ. ԴՈԲՐՈԽԻՄԻ ԼՈՒԾԱՐՔԸ

§. 46. ՀՍԽՀ Դոբրոխիմի և նրա ֆիլիալ բաժանմունքների փակումը տեղի կարող է ունենալ Դոբրոխիմի կազմակերպությունների պատգամավորների Համահայաստանյան Համագումարի վորոշմամբ կամ կառավարության պահանջմամբ։

§. 47 ՀՍԽՀ Դոբրոխիմի գույքը հաշվեհարդարը կատարում է Համահայաստանյան Համագումարի կողմից նշանակված Հաշվեհարդար Հանձնաժողովը։

§. 48. ՀՍԽՀ Դոբրոխիմի և նրա բաժանմունքների լուծարքի դեպքում նրա ամբողջ գույքն անցնում է ռազմա-քիմիական գործեր վարող կառավարչական մարմիններին։

ՊԵՏ. ԿՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0217966

41. 624